

լուծիւնը մեծ համակարգով է ընդունուել այս-
տեղ: Մենք դարձեալ պատմենք և այս գործի
սկզբնաւորութիւնը:

Պ. Բաֆֆիի յօդուները կատարելու միտքը
ծնուեց զեռ անցեալ տարվայ սկզբին և տաղան-
դաւոր վիպասանին համակրողները միայն մի
հրաւերի էին սպասում, որ արձագանք տային:
«Մշակի» անցեալ տարվայ № 158 ի մէջ մենք
առիթմ ունեցանք մի երկու տողով յայտնել մեր
փախազը այդ յօդուների կատարվելուն համար:
Այնուհետև հարցը արծարծուեցաւ աւելի ջերմ
կերպով և պ. Բաֆֆիի տեղւոյս բազմաթիւ հա-
մակրողները քանիցս անգամ յայտնեցին իրանց
պատրաստակամութիւնը մասնակցելու մի այդպի-
սի դրականական տօնակալութեան: Թող հաւա-
տացած լինի «Մեղուի» լրատուն, որ եթէ մենք
համազօր չը լինէինք տեղւոյս հայ բնակչաց
բուն համակրութեանը դէպի պ. Բաֆֆի, մենք
մեզ թոյլ չէինք տայ լրագրի մէջ ձայն բարձրա-
ցնել ի դիմաց ժողովրդեան: Անցնենք եղելու-
թեանը:

Գոնավարի 2-ին՝ տեղւոյս Ընթերցարանի սե-
նեակում հաւաքվեցան մօտ քսան երիտասարդ-
ներ, պ. Բաֆֆիի դրականական գործունէութեան
25 ամեակը տօնելուն մասնակցելու մասին խոր-
հրդակցելու յատուկ նպատակով: Գործիւնի միտ-
քը այնքան ընդհանրացած էր, որ հարկ չը կար
երկար ու բարակ խորհրդածութիւններ, ուստի
որոշվեցաւ բանալ ստորագրութիւն, որից հենց
տեղուտեանը գոյացաւ ինստիտուտ բուրու. չափ:
Այնուհետև երիտասարդները ընտրեցին իրանց
միջից չորս անձանց, որոնք շարունակելու էին
ժողովարարութիւնը: Ժողովականաց խնդրանք
պ. Ն-ի, ամենակամ քահանայ իրեւ ամէնից
ժողովարարութեանը թէ այդ մասնակցի եւ թէ ա-
ռանձնապէս կանանց մէջ, հասցրած է 300 բուր-
ու և դեռ շարունակվում է:

Ոչ միայն ոչ ոք ակամայից չէ տուած իր նուէ-
րը, այլ ընդհակառակը հայ արհեստագործ, ման-
րակամաւոր, հայ գիւղացիներ, իրանց նուէրը տա-
լիս ավստում էին, որ դրամական սղութեան
պատճառով չեն կարող այդ գեղեցիկ գործի հա-
մար տալ այնքան սրբան ցանկանում էին: Մի
քանի տեղերում, մասնակցի անդամներին հիւ-
րանքներ էին և շնորհակալութիւն յայտնում այդ
բարի նպատակի համար յանձն առած դժուարու-
թիւնները կրելու համար:

Ահա այս է ճշգրիտ, անպատճառ եղելութիւնը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՆ

Թիֆլիս, 13-ին փետրվարի

Ի գիտութիւն հասարակութեան զեկուցանում
ենք, որ Հաւաքարի ս. Մարիամնան օրիորդական
ուսումնարանին ինստիտուտ և հոլանտուրութիւն տա-
ծող մեծարգոյ տիկին Կատարինէ Ռօտինեանը
նուիրեց ուսումնարանին 100 բուրլի, նրա ամու-
սինը՝ մեծապատիւ պ. Գովհաննէս Ռօտինեանը
վեց դասական նստարան—գրասենյակ իր որդւոյ

նվ է, ինչպիսի անձ է իր աստղայ հարմարեցուն
կամ որ աղջկայ համար հետաքրքրական չէ իմանալ
թէ ով պէտք է լինի իր ապագայ փեսացուն: Եւ ահա
այդ նպատակին համեմատ համար մի շատ դիւրին
ճանապարհ կայ եղել. դա՛ ս. Սարգսի տօնի
լուսանկար գիշերը աղի կօկօլա ուտելն է: Երբ
տասարը կամ օրիորդ տօնի նախընթաց, այսին-
քէն ուրախ օրը պէտք է առաւօտից մինչև երեկոյ
բերանը ոչինչ սնունդ չը դնէ, կատարելապէս անօ-
թի, ծարաւ մնայ: Եւ գիշերը այդ աղի հացն ու-
տէ և այնպէս մանի անկողին բայց ինչքան էլ որ
ծարաւը նեղացնէ նորան, նա չէ կարող ոչ մի
կաթիլ ջուր առնել բերանում: Եւ ահա այդ գիշեր
կարգուն, ծոմապան՝ եթէ երկուստարը է՝ մի
օրիորդ իսկ եթէ աղջիկ է՝ մի երկուստարը կը
տեսնէ, որ բաժակով ջուր կը բերէ, կը տայ
ծոմապանին: Ահա այդ իսկ երկուստարին է կամ
այդ աղջկին է նրա ապագայ խօսեցեալը—նրա
նա չա՛ն ա՛ծ ր: Եթէ այդ երեւոյթը հեռուից մա-
տոյց բաժակը, նշանակում է թէ նշանածը հեռու
տեղից պիտի լինի. իսկ եթէ մօտից տվեց, ասել
է թէ մօտ տեղ, այսինքն նոյն կամ մերձակայ քա-
ղաքում, գիւղում է բնակվում նա: Այդ ապագայ
նշանածին ցոյց տուողը ս. Սարգսին է լինում, յար-
գելով այն աղջկայ կամ մանչու լինելը, որի պա-
տիւ նրան ամբողջ քանակաւ ժամ միայն մի կտոր

անուշով և նոյն ուսումնարանի խնամակալ մեծա-
պատիւ պ. Միքայէլ Սալամբէկեանցը երկու նըս-
տարան—գրասենյակ: Այդ ուժին գրասենյակները
չլինում են Կոնցէյի սիստեմայով, որովհետեւ նա-
մենակատարեալն է իր տեսակները: Եթէ մեզ
հարկաւոր է ուսում, ոչ պակաս հարկաւոր է և
երկնայոց կազմուածքի կանոնաւոր և հաւասարա-
չափ զարգացումը: Ուրախ և միշտ ցանկալի ե-
րեւոյթ է տեսնել թէ ինչպէս են ողջմիտ անձինք
ուշադրութիւն դարձնում այդ կէտի վրա:

Խնդրում ենք տիկին և պարոն Ռօտինեաններին
և պարոն Սալամբէկեանցին ընդունել մեր շնոր-
հակալութիւնը և երախտագրութիւնը:

Նախագահ ուսումնարանի վարչութեան Բ. Նա-
ւասարեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՆ

Թիֆլիս, 12-ին փետրվարի

Վերելից արած կարգադրութեամբ, թեմակալ
առաջնորդի հրաւիրանք, ընդունված սովորու-
թեան համաձայն, կատարվելու էին ընտրութիւնը,
յուշվարի 29-ին, Թիֆլիսի հայոց եկեղեցիներում,
չորս չորս աշխարհական իւրաքանչիւր եկեղեցից,
որ սքեռ մարտի մէջ կատարին թեմի աշխարհա-
կան պատգամաւոր: Ընտրութիւնը, որը մասնակ-
ցելու է Եւթմանում Հայոց Հայրապետի ընտրու-
թեանը: Քաղաքի հայ հասարակութեան մէջ բա-
ւական չարժու կար, փողոցները կենդանի էին
անցուղաւ մտորելով. հասարակութիւնն ըն-
դուն էր իր շահը և իր հետաքրքրութիւնը դնե-
լու: Թիֆլիսցիք էին այդ եռացող մարդիկ թէ
օտարաքաղաքացի հայեր, հաստատել կամ ժխտել
չեմ կարող ըստ մեծի մասին: Միայն, լու. ճանա-
չողները մէկը, նոյն ինքն քաղաքին, մի չարաթի
յետոյ հարցնում էր «Եթէ էին Թիֆլիսի իշխանա-
դունը, աշխուշանք, հասուն պաշտօնատարներն
ու կրթութեանը, ուր էին պատուաւոր քաղաքա-
ցիք, բազմաթիւ արհեստագործները», յետոյ ինքն
իրան պատասխանում էր, որ այդ «Ջինք քաղաք-
ցիները» զբաղված էին, օրը կիրակի գրով «փո-
ղոց երթելու լու. սովին ու լքօ գնելու և այն-
տեղից էլ մի չիբաշխանա զիպելու, Կարչօյի
կարմիր գինու համը տեսնելու, որ օրագրովին
լու. սով կը դայ, եկեղեցի գնալու վախտ չը
կար, այդ ժամանակը տանը զաւուսակ կար,
փողը պիտի առաջ կշտանար»: Եւ, ուրեմն
միտ չը կայ, ցաւելու ինչ, որ այդ պատուական-
ները օրուց ընտրութիւններին ներկայ չեղան.
փառք Աստուծոյ, լքօ ջոկելու համար չէր հրա-
ւերը: Բայց չէ, էլի ասում էր նա, ավար դրօս
չը լինելով, դոցա տեղ այդ օրն հայացել էին,
իսկ լուսաւորական էին դարձել «համոզմամբ
հայ բողոքականները, հայ մասնէրական կամ կա-
թօլիկ ծնածները», այդպիսի ընտրութեանց մաս-
նակցելու «հրաւերը» չունեցողները: Այո, այդ
ցաւել ըսն է, որ հայ եկեղեցու հովիւները, կրօ-
նատէր «Արարատ» և բարեպաշտ «Մեղու» կար-
գացողները, դեռ մինչև հիմա, ամբողջ քան և
հինգ տարվայ դասաւորութիւնից յետոյ, այնքան
ճանաչողութիւն ձեռք բերել չը կարողացան, որ
ջոկէին օտարը տանեցուց, չը թողնէին որ դալը

խառնուէր գառները մէջ: Բայց էլի որ տէրտէր-
ները լու. են արեւ՝ այդ կաթօլիկներին, մասնէ-
րականներին ու բողոքականներին ներս թողնե-
լով, քան էր թշուառական-Կարչօյի գինով թշու-
րը—կարմիրներին և լքօյով ու օրագրով փո-
ղերը—ուսածներին. գոնէ այդ իրաւունք չու-
նեցողները այնքան բարեխիղճ գտնվեցան, որ
ընտրեցին անկախաձեւի հայ-ուսաւորականներ-
ին—պ. պ. Պ. Սիմօնեանցին, Արք. Գովհան-
նէսեանցին, Ս. Սարգսեանցին, Գ. Եւսեպիոս-
եանցին, Պ. Ղազարեանցին, Գ. Սարգսեանցին, Ա.
Սարգսեանցին և այլն, և այլն շատ բանիմաց թիֆլի-
սեցի ու թիֆլիսացիներ՝ զլուս պատուելու չափ
երդուեալ հայ լուսաւորականներ. միայն, աստա-
նօք անշուշտ, հրետիցի զորեղ, ներս են պրծել
երկու անհարազատ հայեր, կաթօլիկ ծնուած կեղ-
ծաւորներ, մի Գովհան Դիմանեան (ըստ գրակա-
նութեան՝ Դիմանց) և մի Աւետիք Եղեղեան (ըստ
գրականութեան՝ Ա. Մ. Ե. Պ.): Գէ. հիմա 85
ընտրութեանց այդ երկուսը իս ձեռքը Եւթմա-
նի փոխարէլ կարող չեն: Բայց այնու ամենայ-
նիւ «Մեղուի» քաղաքին իրաւունք ունի, այդ կտոր
տեղում, ցաւելու, փողը տրտելու թէ ինչի՞ օրով
ցերեկով այդ կաթօլիկները սողոսկրել են ու յան-
կարճ գլուխները պոկւոյն դուրս ցցել Սիմօնեան-
ցի ու Եղեղեանցի մէջ տեղ: Իրաւ, զայնակընդ-
միտ: Այո, եթէ Կարչօյն և Եղեղեանցիները անէին
ընտրութիւնները, իս այդ տեսակ խաչատուրու-
թիւն չէր պատահիլ—ասում էր մի մեղուական
և յոգւոյ հանում Գ):

Այլ առակ. Ալեքսանդրապոլից էլ գանգաւ էր
զբղած թէ ընտրութիւնն այնտեղ էլ կանոնաւոր
չէ եղել. բ. Գ. Գովհաննիսեանց չէ ընտրվել, այլ
ընտրվել է պարոն Գովհ. Բարսեղեանց. ինչի պէտք
է առաջինը, որ ջինս մեղուական է, 27 ձայն
ստանալու և երկրորդը, որ «Մեղուից» խրտում է
ինչպէս ուղար նախաձեռնող, 138 ձայն, և առ-
եղ մի գոռում գոռում մի այլ անկիւնից: Այդ-
տեղ էլ իս լքօ, օրագրու ու Կարչօ չը կար:
Այդ քաղաքը կօթ քաղաք է և 165 և աւելի ըն-
տրող կուսներ ընտրել են 138 ձայնով մի կու, Ի-
րենց ջինս քաղաքացի, և ոչ նրա 27 ձայնով
հակառակորդին, որ, հաստատ, ալեքսանդրապոլիցի
չէ, այո, որքան դիտում, մի քիչ այս կողմից,
Կարչօստանի և Կոստանի մէջ տեղ գտնվող
գաւառները: Ել ինչ կայ գանգաւաւու. Կոստեղը
սկզբունքը անխախտ են պահել. օտարաքաղաքա-
ցուն չեն ընտրել: Կուք էլ էր եր բղաւում, էլի
Երտրութիւնները կանոնաւոր չեղան ասելով գը-
լուս տարան: Ո՞վ է մեղուոր: Փոխանակ «Կիրա-
կի, ամսի 29-ին—12 ժամին» բուզվար գնալու ու
այնտեղ գոռաբանալէր պարոններ և աղջիկներ չը
գտնելով զարմանաւու և պատճառը բարեկա-
մից հարցնելու ու նոր իմանալու, որ այդ
օրը «պատգամաւորների ընտրութիւնը կայ»
և յետոյ պարապրդել հետաքրքրութեամբ «մի
քանի եկեղեցի պատուելու» և, բերանաբաց հի-
ացմամբ, կատարվող անկանոնութիւնները իր-

*) Մեղը, որ ոմանց ընտրութիւնը քիչ ուշ և
դաւ, ուշ յայտնվեցաւ, թէ ոչ ընթերցողը այնքան
զիջացաւ թիֆլիսից գոցէ ազատ մնար:

ցանկանայ երազում կամ ջուր բերող տեսնէ, մա-
նաւանդ երբ ամբողջ օրը նրա երեսակալութիւնը
ամբողջված է լինում այդ առարկայի վրա:

Կէս դիշերին մօտ էր, ես վերադառնում էի
տուն. ճանապարհի վրա մի տան բակում ես տե-
սայ մի քանի պատանիներ, որոնք ձեռներին մի
ազատ լրջով թոնրի գլխին իրար հետ ցած ձա-
նով խօսում էին:

«Տո, էդ նալը շատ մաշված է» ասում էր
մին:

—«Մինքն մաշված պիտի եղնի հէլեթի: Սուրբ
Սարգիսը ինչպիսի հեռու տեղիմէն, հէմ ինչպէ
թուցնելով է դալի. հէլեթի կուսալէր ձիւ. նա-
լը» պատասխանեց ընկերը ծիծաղելով:

- Գէ, բայ թոնրից, Այո.
- «Ումին կծիծաղում պիտի զցինք նալը:
- «Չեք կարոյնց կծիծաղը դահա:
- «Եյ, կու ձանչընաւ, որն է նահանցը:
- «Կու ձանչընաւ, հապա. էտպիսի թարաֆը,

լին բերնում մէ կծիծ է. առ. ցցէ նալը մէջը:

Ահա սուրբ Սարգիս պաշտօնակատարները, ա-
սացի եւ մոքումս, որոնք ձիւաւոր սուրբին էլ նե-
ղութիւն չեն քաշել տալիս, և անցայ:

Նրա հասցէ իմ սենեակին, այդ աւուր պատահա-
ծը մի լու. ամբողջից մոքումս և նստայ գրասե-
ղանի առաջը: Պարզ ի պարզոյ պատմեցի ահա

րե նիւթ Երեմիական ողբոյ ժողովելու, լու. ա-
րած կը լինէր ջինս քաղաքու քաղաքի բարեկամը,
եթէ գնար ժամը 11-ին, պատարաւ ժամանակ,
մի եկեղեցի—իր ծխական եկեղեցին—կամ ս.
Նշան, և նախ «աղօթք ու մաղթանք» անելով և
«Հոգւոյն Սրբոյ շնորհ» իր վրա իջնելով, ապա,
ընտրութեան ժամանակ, սովորեցնէր խառնը
կանոնաւոր ընտրութեան եղանակը, որ յետոյ,
այլոց յանդիմանելիս, իր գործով, իր կատարած
կանոնաւորութեամբ խրատէր կամ ավիւրեւան
անէր համարակներին և զարեցի աղաներին: Կամ
առաջուց գուշակելով (ինքն իս անխորճ մարդ
չէր), որ կարող էին անկարգութիւնը պատահել,
ըստ որում զիտէր որ գոյութիւն ունին «խմբեր,
ճարպիկ, եռանդու երիտասարդներ, մինչդեռ ըստ
սովորութեան և առ խորը թմրութեան և անտար-
բերութեան մէջ խորթ ում էին արհեստաւոր-
ներ և քաղաքացիներ», այո, ինքը գուշակելով
այդ թող գուշակեցին և խօսքով ու հարկն էր
է՛ր որով «Մեղուի» էլեկի մէջ, որոնք խմբագրի
կողմից պարոն Քաղաքու համար միշտ բաց են ե-
ղել թող զուշակեցին, ճանապարհներ ցոյց տար
այդպիսի ծանր նշանակութիւն ունեցող գործը
արժանաւորապէս կատարելու, որով գուցէ առաջն
առած կը լինէր անկանոնութեան՝ որի վրա պիտի
չատ անօրուտ և վերջին խեղճով ողբ ու կական
է բարձրացնում, և մի խումբ իր շուրջը և այլ
ախտակող խմբեր ուղիւ քաղաքներից իր հետ
գոռ ու գոչով լացոյցանում:

Չը կայ երեւոյթ առանց պատճառի. այդ գոռ
ու գոչով այդ զայրոյթի խոխոջանքով զորովող
արատաւորների անխաղաղութիւնը լինէր ըստ ինքեան
պարզ է: Կարը ապականված է. խորամանկու-
թիւն, խորախառնութիւն, շահախորթեանն առաջ-
նորը մտած, ամեն տեղ անկանոնութիւն են երե-
ցնում, անկանոնութիւն ցանկում: Քանի մի օրից
ի վեր ոմանք, Անեղեցիքի գործութեամբ լրջված,
սկսել են քաղաքը նոր ապաշխարութիւն, նոր
մկրտութիւն, նոր շնորհ Աղանայ. բայց ոչ ա-
պաշխարող, ոչ մկրտող, և ահա դարմանից անդ-
քան զայրոյթ և փրկութիւն: Կրտապի է, պա-
րոններ: Վերջապէս խաղեց, որ դուք չէք ընտրու-
ղը: Յանկարծաւոր ներշնչութեամբ այլակերպված
են ոմանք, անշուշտ աղօթք և պանեղութեան
ազդեցութեան տակ, և աղապակում են—ընտրոյն
հողին է: Եւ իրաւունք ունեն. դուք առ այժմ,
պարոններ, աղօթեցէ: Հէքիսթի թուշուր իս
գիտէ. նա ում ումին որ գնաց նստաւ նա կը
լինի թագաւոր: Հակաապագութիւնը գլուխ է վեր-
ցնում: Կուք ասու կացէ. ամեն բան լու. կերթայ:
Խօ, մի ընդապէս, հողալով չէք կարող ձեր հասա-
կի վրա յաւելանել թիւ մի: Աղօթեցէ, աղօթե-
ցէ:

Պրոյնց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Русскія Вѣдомости» լրագրի № 35 մէջ կար-
դում ենք Բաֆֆիի յօդուների առթիւ. հետեւալը:
Փետրվար ամսի միջին թուրում կատարվե-
լու է Թիֆլիսում Բաֆֆիի, ամենահամարա-

եղելութիւնը, ընթերցող, թէպէտ գիտում որ այս
աւելորդապաշտական սովորութեան հրատարա-
կումը տեղոյս ժողովրդեան շատ անհաճոյ պիտի
լինի:

Փետրվարի 4-ին
Աւելող գիշեր եւ զբաղված էի աղի կօկօլայով:
Յերեկվայ դէպքերը, մասնաւոր երբ գրել էլ էի,
խոր տաւաւորութիւն էին արել իմ մտքում, այն-
պէս որ, առանց իմ ցանկութեան եւ երազեցու-
թեան տակ... Եւ թէպէտ չը տեսայ իմ ապագայ
հարմարեցում, ոչ ոք ջուր չը տվեց ինձ, վառն դի-
պէտք է ասած, որ ծարաւ էլ չէի, սակայն իմ մը-
տաց առաջ խառնիխառն պատկերանում էին
ցիւր ու ցան «աղի կօկօլաներ», կորկորի կծիծաւոր,
ձերմակ ձիւաւորի նալեր, և իրենց ապագայի մա-
սին դարձված մանչ ու աղջիկները՝ ինձ այնպէս էր
թմրում լուսում, թէ երազում եմ—երազի մէջ ե-
րազ էի տեսնում:

Չը նայելով այդ բոլոր մտածողութեան, եւ ա-
ռաւօտ կանուխ դարձեցայ և կանուխ տանից
դուրս ելայ, գնում էի իմ սովորական գործին:
Փողոցով դէպ ի վեր բարձրացած ժամանակ եւս
մտածում էի դարձեալ իմ գիշերվայ խառնիխառն
երազի վրա, երբ յանկարծ նշմարեցի մի կանայի

ճանօթ հայ բանաստեղծներէ մէկի, քանակէնդ-
ամենայն դրականական գործունէութեան յօդակները:
Բաժնիկն, որի իսկական ազգանունը Մէլքի-Յա-
կոբեան է, առաջին անգամ հանդէս եկաւ գրական-
ական ասպարեզում կենդանի և գեղարուեստ-
ուն գրութեան վաղիկ վերակենդանումը որոնք յետոյ
հրատարակվեցան մի քանի անգամ ժողովու-
թանքի ձեռքով «Փոռն» վերնագրով: Իսկ ներքո-
յիշեալ աշխատութիւններէ չնորհիւ Բաժնիկն գրա-
ւեց հասարակութեան անպայման համակրութիւնը:
Նորա հեղինակութիւնները կարգադրուած են ամեն-
ուրեք և ամենայն տեղ: Իսկ այժմ նորա վերին
աստիճանի տաղանդաւոր գրչով ստեղծագործած
հեղինակութիւնը, որը վերաբերում է հեղինակին
մանրամասնաբար ծանօթ պարսից և թուրքաց
լեզուներէ և բէկերի, այս արեւելեան հնչողութիւն
ծառայող սիւրբարիներէ և տիրապետող իշխաններէ,
հարեմական կեանքին, նորան տալիս է անվիճելի
իրաւունք բունդ պատուաւոր տեղ եւրոպական
յայտնի բանաստեղծներէ շարքում: Այդ տաղան-
դաւոր բէկերիստի հրատարակած հեղինակու-
թիւններէց ցոյց կը տանք «Խենթը» — արկածներ
և նկարագրութիւններ անցեալ ուսուսումնական
պատերազմից, «Գալիթ-բէկը» — անցեալ դարու
հայոց միջոցներէ կենսագրութիւնը, «Հարէմը», ու-
րի առաջին մասը մի քանի տարի արանից առաջ
գեղեցիկ էր «Русскія Вѣдомости»-ում «Պար-
սից հարէմում» վերնագրով: «Ասիկ աքաղաղ» —
Ռուսաստանի հայ վաճառականներէ կեանքից,
«Կայծեր», «Փոռն» և այլն: Այժմ Բաժնիկն ըն-
դարձած է հայոց գիւղական դասակարգի և վա-
ճառականներէ կեանքի ուսումնասիրութեամբ և վա-
կառարում է «Մշակ» լրագրի գլխավոր և մշտա-
կան աշխատակցի պաշտօնը: Մենք ընդհանր
Մոսկվայի հայ հասարակութիւնը և ուսանողու-
թիւնը պատրաստուած է ընծաներ յօդակներէ օրումն
համար:

Պ. Միքայէլ Արամեանց, որ կենում է թիֆլիսում,
վարձակալի նախընտրելի վրա, սեփական տուն,
№ 4, խնդրում է մեզ տալ հետեւեալ: «Ս. Պե-
տերբուրգում իմ հաշուով պահուած եւ երկու ուսա-
նոցներ, որոնք ինձանից տասնամ եւ թոշակ:
Անցեալ 1883 թվ. դեկտեմբերին ուղարկած եմ
միտ ալ. իրան Գրիգորի Գեորգիւի, որպէս զի
սա հասցնի յիշեալ երկու ուսանողներին, բայց
ահա մի քանի օր առաջ ստանում եմ նամակ Ս.
Պետերբուրգից, որով նա ինձ հաղորդում թէ վա-
ղը ստացաւ և թէ նա իր մօտ մնում է անգոր-
ծաբերի քանի որ յիշեալ երկու ուսանողներէ
հասցնի իրան յայտնի չէ: Այդ պատճառով ինդ-
րում եմ «Մշակ» խմբագրութիւնից տալիս իմ այս
հրաւեր յիշեալ երկու ուղարկողներին, որպէս զի
նրանք գնան ալ. Գեորգիւի մօտ և իրանք ստա-
նան իրանց թոշակը: Երկու ուսանողներէ թէ աղ-
գանձները և թէ անձնաւորութիւնները յայտնի են
թէ ալ. Գեորգիւի մօտ և թէ ալ. Գեորգիւի Արտեմի:
Եղեանքն»:

«Кавказ» լրագրում կարդում ենք, որ փետր-
վարի 12-ին գիշերը Կովկասում, Հաւայեան և

դէմք մի տան պատուհանի վրա: Այդ միջոցին,
փողոցում ոչ մի անցողի չը կար: Յետոյ երևում
էին միայն մի քանի բարեպաշտ արք և կանայք
եկեղեցի գնացող: Հետզհետէ մօտենալով այդ տան
ևս ճանաչեցի որ նա մի աղջիկ էր, այն աղջիկ-
ներէց, որոնք այս տեղ արդէն «մի անգամ» են
համարուած: Մնացած, այսինքն բուն քաղցր ս-
մուսնութեան համար ժամանակին անցած, պառա-
ցած, թէպէտ դրանք, այդպիսիք գեւ հազիւ 17—
18 տարեկան են լինում: Օրիգորի դէմքը բոլոր-
վին տխուր և մռայլ էր: Նրա արտաքին մտածող
աչքերից կարելի էր իսկույն գոչակել որդի ան-
հանգստութիւն և մտառանջութիւնը: Նա ինձ
չէր տեսնում և ես ազատ ժամանակ սենցաղ դի-
տել նրան և հետաքրքրվել թէ ինչ կարող էր նը-
րան մտառանջութեան մէջ ձգել այդչափ կա-
նուկ ժամանակ: Ես նկատեցի որ օրիորդը դա-
ված էր միայն մի բանով. նրա աչքերը յառած
էին դիմացի տան տանիքի վրա. և ոչ իսկ կէս
ակնթարթի նա համարձակուած չէր իր ուշադրու-
թիւնից հանել այդ տեղը: Իսկոյն ընտանեացիս իմ
աչքերն ես ուղղեցիք այդ տանիքի կողմը և ինչ
տեսնեմ: Մի կէս ժամի կօխոյս» կար դրված տա-
նիքի ծայրի վրա և դա էր խեղճ աղջկայ ամբողջ
նոյն ու ուշադրութիւնը գրաւողը: Բնականաբար ես
աստիկ հետաքրքրուած էի թէ նա ինչ է սպա-

կիրօնայա փողոցներէ անկիւնում զոնոված գնդա-
պետ Ռէշէտովի տունը միտքը պարկէ: Յայտնու-
ցաւ, որ առաջինները դիտմամբ կրակ էին գցել
այդ տունը, որ ծածկն իրանց յանգանքը: Նրանք
նախ սպանելին Ռէշէտովին, նրա կնոջը և մի ծա-
ւաղին, կտրելով նրանց գլխերն ու ոտները: Ռէ-
շէտովներ ծեր մարդիկ էին, և մնակ էին աղ-
բում: Ինչն Ռէշէտով առաջ ինտենդանտութեան
մէջ ծառայելով մի պահետի տեսուչ էր և ունէր
կարողութիւն: Վերջին ժամանակներ, ասում են,
նա փողը տոկոսով էր տալիս:

Ստացանք ալ. Բաժնիկի յօդակներէ առկթով
Թիֆլիսի մի քանի երիտասարդներէ 17 բուր, որ
և հասցրին ուր հարկն է: Նոյնպէս ստացանք 3
բուր Թիֆլիսաբնակ ալ. Յով. Ստեփանեանցից:
Նոյնպէս հասցրին:

«Русскій Курьер» լրագիրը հաղորդում է, որ
փետրվարի 5-ին Լադաքեան ձեմարանում Մոսկվա-
յի հայերը դուռնաբերելով իրանց միջոց մի պատ-
գամաւոր ընտրելու համար, որ պէտք է ներկայ
գանձի Նոր-Նախիջևանի մէջ թեմական պատգա-
մաւոր ընտրութեան ժամանակ կաթողիկոսական
ընտրութիւններին մասնակցելու նպատակով ընտ-
րեցին իրանց միջոց մի պատգամաւոր Մոսկվայի
համալսարանի պրոֆէսոր ալ. Ներսիսեանցին: Ռու-
սագիրը այն կարծիքն է, որ թէ ուսուցչ և թէ
թիւրքաց հայերի մեծամասնութեան կաթողիկոսա-
ցուն Կ. Պոլսի Ներսէս պատրիարքն է:

«Новое Обозрѣніе» լրագիր մէջ կարդում ենք,
«Օրերումս հրատարակվեցաւ հայոց ամենալաւ վի-
պասանելի մէկի, ալ. Դերենցի բրոշուրը, որ
նուիրված է կաթողիկոսական ընտրութեան հար-
ցին: Այդ բրոշուրը վերնագրված է «Կաթողիկո-
սական և խրիստոնէ»: Հեղինակը նկարագրում է
այն դժուար դրոշմը, որոնք սպասում են ապա-
գայ կաթողիկոսին և նրա կարծիքով կաթողիկոս
լինելու համար միակ կանդիդատը իրման հայ-
րիկն է: Հեղինակը նկարագրում է Հայրիկի կար-
ճառօտ կենսագրութիւնը, որի ամբողջ կեանքը,
Դերենցի խօսքով, ժողովրդի և եկեղեցու օգու-
համար աշխատանքի մի անխելի շղթայ է եղել:
Թէ թեմական առաջնորդութեան ժամանակ, թէ վի-
նելով Կ. Պոլսի պատրիարք, թէ հասարակ վաճա-
հայր նա մնացել է ժողովրդի և քրիստոնէական
եկեղեցու հասարակ, բարոյական անշահաւոր և
իսկական ծառայ: Նրա քննադրութեան նշանաւոր
յատկանիշներից մէկը քրիստոնէական համբեր-
դութիւնը և հոգեկան հարստութիւնն է: Մարդկանց
կարօտութեան ժամանակ նա ամենքին օգնում է
առանց կրօնի և ազգութեան խտրութեան: Վեր-
ջին տղի ժամանակ Հայաստանի մէջ նրա առեւ
միշտ լինել է եղել քրդերի և հայերի, թիւր-
քերի և եղիպեցիների և նա ամենքին օգնում էր:
Բացի այդ, իրմանը ճարտարաբան քարտիչ է,
ընդունակ բանաստեղծ և հոգևոր գրող: Հեղինա-
կը վերջացնում իր բրոշուրը հետեւեալ հրաւերով.
«Ինչ, կաթողիկոսական ընտրութիւններին մաս-
նակցողները, եթէ ձեռք համար լինեց են ձեր աղ-
գի և եկեղեցու շահերը, խրիստոնէական կաթողիկոս
ընտրեցէք»:

տաւ այդ աղի հացի կտորից և վերջապետութիւնը
տեսնելու համար, պատրաստ էի մինչև երեկոյ
սպասել եթէ ոչինչ արդէն չը լինէր: Այդ միջո-
ցին օրիորդը խոր հառաչելով մի քանի խօսքեր
արձակեց բերնից, որ, դժբաղդաբար, ես ամ-
բողջ չը կարողացայ լսել. իմ ականջին որոշ հա-
սան միայն մի քանի հետեւեալ կցկոտուր խօսքերը.
«Այ... կարդա... դէ՛, արի, դէ՛... չուրա չարկա-
լով... թարգմտա... դատի... Էն թարգմտ (կող-
մը)... Աստիկ տճաճութեամբ, այդ միջոցին տե-
սայ, որ փողոցի միւս ծայրից մի քանի կանայք և
ընկերաց, «Հաղորդ» մէջ վաթմարմիված, որոնք եկեղեցի
էին գնում անշուշտ Ես իսկոյն վար առն աչքերս, և
ընկերաց շարունակեցի իմ ճանապարհը, բայց միտ-
քս դրի անպատճառ իմանալ այդ բանի միջնու-
թիւնը: Ընթերցողին էլ կը հասկնար կարծեմ,
բայց այդան միայն, որ խեղճ օրիորդը ու Սար-
գսի ծոմապահ էր:

Երեկոյեան ես գնացի դարձեալ մի և նոյն բա-
րեկամի տունը և հանգամանքօրէն պատմելի յի-
շեալ դէպքը: Բարեկամս բացատրութիւնից հասկա-
ցայ, որ եթէ ծոմապահ օրիորդ կամ երկուս-
սարը երազում տեսաւ մի անձի, որը նրան մօտից
ջուր տուց, բայց չը կարողացաւ ճանաչել նրա
անձնաւորութիւնը, նա առաւօտ կանուկ աղի կօ-
խոյսի մի կտորը կը տանէ կը դնէ սանդիքի վրա:

Ամսոյս 16-ին, հիւզարկի օրը, Թիֆլիսի հայ
դերասանական խումբը, Վարդանանց տօնի առ-
թիւ կը ապ իր վերջին ներկայացումը. 1) «Վար-
դան Մամիկոնեան» կամ «Վարդանանց Պատե-
րազմը», ողբերգութիւն 4 գործողութիւնով և 5
գրաւորութիւն հեղինակութիւն Կարինեանցի, երգե-
լով. երգերի ժամանակ և անորակներում կածէ
ալ. Կարամուրադ: 2) Առաջին անգամ «Մէկ
հայրանցու» վերջի մէկ գործողութիւնով թարգ-
մանութիւն խաղերէնից (Թուրքանցի և 3) կենդանի
պատկերներ: Յուսով ենք, որ Թիֆլիսի հայ հա-
սարակութիւնը իր ներկայութեամբ կը պա-
տուէ Վարդանանց յիշատակը և կը խրախու-
հայ դերասաններին ապագայում եւ անձնութեա-
րեամբ ծառայելու հայրական բեմին: Իսկ կիրա-
կի օրը, առաւօտեան ժամը 11-ին նոյն խումբը
կը ապ ներկայացուն մանուկների համար:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՀԻՄՆՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՍԱԿԻՄ, 13 փետրվարի: Տեղական գոր-
քերը հրաժարվում են Տրինիտատ գնալուց:
Հաւատացնելով, որ նրանց գնալուները չեն
ծաղում թշնամու վաճանքներ: Բրիտանա-
կան զօրքերը արդէն կենտրոնացած են Տրին-
իտատի մէջ, բայց լուրերի համեմատ ար-
շաւանքը Տօկարի վրա դադարեցրած է:

ՄՈՍԿՎԱ, 13 փետրվարի: Երկաթուղի-
կան Բորոյինօ կայարանի կառավարիչը
վախճանվեցաւ սև ծաղիկից: Կայարանի դռ-
ները ամրացած են: Գնացքները Բորոյինօ
կայարանի մօտ չեն կանգնում:

ՐՈՍՏՈՎ (Վոնի վրա), 13 փետրվարի:
Գոն դեռի յատակը խորացնելու նախադէմը,
որ մշակված է պատեղ նիւտեր ունեցող
մասնաժողովից, ներկայացրած է ճանա-
պարհների հաղորդակցութեան միմիարու-
թեանը:

ԿԱՅԻՐԷ, 13 փետրվարի: Անդրիական կա-
ռավարութեան կարգադրութեամբ, Էդու-
գօրքերը կարգաւ են Օսմանլիքի դէմ: Գե-
ներալ Գրամմ երէկ 200 հինգազօր
ուղարկեց: Տրինիտատի մէջ 4,300 անդ-
րիական զինուորներ կան, իսկ քաղաքը շրջ-
ջապատող թշնամիների թիւում հաշուում են
10 միլիոն 12 հազար մարդ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի: Բարձրա-
գոյն արքայազմով ծովապետ Լէսովսկի ար-
ձակված է ծովային կանտաղութիւնը վե-
րադնող և լրացնող մասնաժողովի նախա-
դահութիւնից: Թագաւոր Կայսրը հոգեկան
ցաւ է յայտնում, որ ծովապետի հիւան-
դութիւնը գրեւոր է նաւատորմին յոյսից
տանել նրան յանձնած նշանաւոր գործը
նրա ձեռքով վերջացրած: Ռուսաց նախկին
դեսպան Պէլիկի մէջ Բիւցով նշանակված է
դեսպան Ալէքսէի մէջ: Փարիզի դեսպանա-
տան խորհրդատու կոմ Պէտր Կապիստ
նշանակված է դեսպան Հապայի մէջ:
Բարձրագոյն պարսի լէյթ-օնուրիստ Կարա-
տին շնորհված է Ալէքսանդր Նէվսկու բրի-
լանտէ նշանները:

ԱՐՄԱՆՑԻՆԱԿ, 14 փետրվարի: Պէնսիլվանի
մէջ բացված է բուլիոնի մեծ գործարան:
Ամեն օր մօտ 3 պուդ բուլիոն է պատ-

րաստվում որսի և հասարակ մսից:
Մեծ պատուէրներ են տրվում արտասահ-
մանից:

ԿԱՅԱՆ, 14 փետրվարի: Երէկ երեկոյեան
Մուկուրովի հիւրասենեակների մէջ ուսա-
նող Միխայիլ երկու անգամ բէկօրէր ար-
ձակեց Եկատերինուրդի նահանգական դա-
տարանի պրօկուրօրի պաշտօնակատար Բա-
րաթինի վրա և վերադարձ նրան ձեռքի և
կողքի մէջ: Վերջին վերջը չափազանց վը-
տանդաւոր է: Պատճառը Բարաթինի կողմից
հասցրած վերաւորանքն է Միխայիլի կը-
նաջը:

ՍՈՒՍԱԿԻՄ, 14 փետրվարի: Թշնամին երե-
ւաց քաղաքից կէս միոն հեռաւորութեան
վրա և ստիպեց անգլիական առաջաւոր
պահապաններին յետ քաշվել: Այստեղի
ամրոցապահ զօրքերի թիւում եղած նէլը
զինուորները ապստամբվում են և սպառ-
նում են թշնամու կողմն անցնել: Սուսկի-
մին մեծ վտանգ է սպառնում Տօկարի անձ-
նատուր լինելու լուրը վերջնականապէս
հաստատվում է:

ՓԱՐԻՑ, 14 փետրվարի: Տարածայնութիւ-
նը բօնապարտեան երկու իշխանների մէջ,
որը վերջացած էր թիւում իշխան Նապօ-
լէօնի ծառայ, նորից սկսեց: «Pays»
լրագիր մէջ իշխան Վիկտորի կուսակից
Պօլ Կասանեակ ծաղրում է իշխան Նապօ-
լէօնի ծառը և պնդում է, որ սահմանա-
դրութիւնը վերադնելու համար ոչ մի
մասնաժողով չը կայ և որ այդ լուրը հնար-
ված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի: Պետա-
կան բանկի 5% տոմսը առաջին շրջանի
արժէ 97 ռ. 12 կ., երկրորդ 95 ռ. 25 կ.,
երրորդ 94 ռ. 87 կ., չորրորդ 95 ռ.,
հինգերորդ 95 ռ., ներքին 5% տա-
ջին փոխառութեան տոմսը արժէ 218 ռ.
75 կ., երկրորդ 213 ռ. 75 կ., արեւելեան ա-
ռաջին փոխառութեան տոմսը արժէ 93 ռ.
62 կ., երկրորդ 93 ռ. 75 կ., երրորդ 93 ռ.
87 կ. ոսկի 8 ռ. 42 կ.: Ռուսաց 1 ռ. 1 օնոնի
վրա արժէ 23⁹/₁₆ պէնս, ուսուց 100 բուր-
ջաբուրգի վրա արժէ 201¹/₈ մարկ, փարի-
զի վրա 247 ֆրանկ: Բօրսայի տրամադրու-
թիւնը ամբողջ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի: Կարլ
Ֆէօդօրովիչ Վիլնէրը միաձայն ընտրված է
բօրսային մասնաժողովի նախագահ նոր ե-
րեքամեակի համար: Պետական խորհուրդը,
ընդհանուր ժողովում, ձայների նշանաւոր
մեծամասնութեամբ ընդունեց ուսումնա-
կական ընկերութեան առաջարկութիւնը,
էլէկտօրներ կազմելու միայն: Լուր է տա-
րածված, որ արքայադատութեան միմիա-
տրութեան մէջ մի քանի փոփոխութիւններ
են օրինագծովում դատաստանական կանոնա-
դրութիւնների մէջ. փոփոխութիւնները գը-
լաւորապէս վերաբերվում են երդուեանների
դատարանին և դատաւորների անփոփոխու-
թեանը:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

դատունը յայտնեցին, որ այդ անտուր բան չէ
և թէ «չար» երիտասարդները ամեն տարի խա-
ղում են այդ խաղը կիճի տէրերի դէմին:

Այդտեղ ես մի քանի խօսք խօսեցայ թէ այդ
սովորութիւնը միմայն աւելորդապաշտութիւնից
է յառաջ եկած և աշխատեցայ փարատել
նրանց մտքից այդ նախապաշարմունքը: Ներ-
կայ եղողներն այդ և կին գրեթէ ամենքը
համոզվեցան և իրանք իսկ խոտաւորանցեցին,
որ այդ սովորութիւնը այժմ առաջվայ չափ
յաճախ չէ և թէ շատը թէպէտ հաւաս-
ն ընծայում դրան, բայց իրեն նախեսաց սովո-
րութիւն յարգում են և կատարում: Միայն վերո-
յիշեալ պառաւ, որը շատ պինդ էր բունած իր
պատկերից մնացած ամեն ինչ սովորութիւն, ուժե-
ղապէս պաշտպանեց «աղի կօխոյս» և նրա յա-
ջող հետեւները, և դուրս հակառակ խօսողներին
անհաւատ անուանեց: Մանաւանդ ինձ, նա աշ-
խատում էր համոզել ընթացք, որ իմ սպաղաղ
բաղդը փորձելու և միանգամայն հետաքրքրու-
թիւնս յաղեցնելու համար, անպատճառ միւս տարի
մի աղի կօխոյս ուտեմ: Պատուի սկզբը չը կոտ-
րելու համար, ես թէն խոտացայ, ծիծաղելով
բայց միտք չունեմ օգուտ քաղել այդ խորհրդից:
Իմ տեղ հրաւիրում եմ փորձի, ցանկացողներին...
Առաքել Սարգսյանեանց

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Թիֆլիսի Նորաշէն եկեղեցւոյ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԳԱՅ ռուսացական փետր-
վար ամսոյս 16-ին, հինգշաբթի, վարդանանց տօնին, կը կատարէ Նորաշէն եկե-
ղեցում իր բարերարներին ՍՈՒՈՄՈՆ ՂՈՒԶԱՆԵԱՆԻ, ԳԱՆԻԼ ԻԶՄԻՐԵԱՆԻ և ՈՎ-
ՍԱՆՆԱՅ ԳԱՎՍԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ հոգեհանգիստը:

2—2

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

(առանձին փոփոխութեամբ)

ՇԻՐՎԱՆՁԱԿԻ

„ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ“

ԵՒ

„ՀՐԻԵՀ ՆԱԻԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ“

աշխատանքները

ԱՐԺԷՔ 50 ԿՈՊԵԿ.

Կարելի է ձեռք բերել Թիֆլիսի մէջ Կենտրոնական գրադաճառանոցում, Աղէքսանդր
Մովսիսեանի մօտ, և „Աստուածատրեանց և ընկ“ տպարանի տնօրէնի մէջ Կատարի-
չեանցի փողոցում, Զուբալովի տանը:

Հրատարակիչ—Արէլ Ապրէսեանց

СЪ 1-ГО ЯНВАРЯ 1884 ГОДА

ВЪ ТИФЛИСѢ ИЗДАЕТСЯ

новая ежедневная (350 номеровъ въ годъ) литературно-политическая газета

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

подъ редакцію А. В. Степанова (бывш. редакторъ „Юридическаго Обозрѣнія“).

Объемъ газеты—печатный листъ средняго формата; программа—общая
всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ.

Подписка цѣна съ пересылкою и доставкою: на годъ—10 руб.; на 6 мѣсяц.
—6 р., на 3 мѣс.—3 р. 50 к., на 1 мѣс. 1 р. 5 к.

Подписка (городская и иногородная) и объявленія (по 5 к. за строку пе-
тита) принимаются въ Тифлисѣ исключительно въ Газетномъ Агентствѣ В. Ша-
вердова, въ С.-Петербургѣ-же и Москвѣ—въ книжныхъ магазинахъ „Новаго
Времени“.

Временное (до 15-го декабря) помѣщеніе редакціи: Давидовская ул., д. Кана
квартира нова, редактора.

За газетою обезпечено постоянное сотрудничество: кн. К. А. Бебутова, Вс. М.
Гаршина, П. А. Измайлова, С. Н. Кривенко, Я. Николадзе, П. А. Опочинина, А. Н.
Плещеева, И. Ф. Тхоржевскаго, Гл. И. Успенскаго, Н. А. Шаврова.

ВЪ КАНЦЕЛЯРІИ ВОЕННАГО ГУБЕРНАТОРА КАРССКОЙ ОБЛАСТИ

О Т К Р Ы Т А П О Д П И С К А

НА ГАЗЕТУ

„КАРСЪ“

НА НАСТОЯЩІЙ 1884 ГОДЪ.

Газета „КАРСЪ“ въ настоящемъ 1884 году будетъ издаваться совершенно
на тѣхъ-же основаніяхъ, какъ и въ прошломъ году, по той-же программѣ и
подъ тою-же редакціею.

УСЛОВІЯ ПОДПИСКИ: съ доставкою и пересылкою въ годъ три рубля, з
четыре мѣсяца одинъ рубль. Подписка принимается въ Канцеляріи Военнаго Га-
бернатора, куда адресуютъ свои требованія и иногородные.

Отъ редакціи. Газета „Карсъ“ имѣетъ ближайшею цѣлью всестороннее изу-
ченіе новопріобрѣтенной Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точ-
ныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направ-
ленныхъ къ ея развитію и благоустройству. Цѣль эта можетъ быть достигнута въ
той мѣрѣ, въ какой лица, имѣющія по своему положенію возможность собирать свѣ-
дѣнія по тѣмъ или другимъ вопросамъ, касающимся Области, ея населенія и распо-
ложенныхъ въ ея предѣлахъ частей войскъ, выразить свое сочувствіе газетѣ и по-
желаютъ оказать ея редакціи просвѣщенное свое содѣйствіе сообщеніемъ имѣющих-
ся въ ихъ рукахъ свѣдѣній и матеріаловъ; по тому мы просимъ этихъ лицъ не от-
казывать намъ въ своемъ участіи и поспѣшить приведеніемъ въ порядокъ и сообще-
ніемъ редакціи находящихся у нихъ матеріаловъ; самая разработка этихъ матеріа-
ловъ можетъ быть сдѣлана и въ редакціи, а потому литературные недостатки ихъ
ни малѣйшимъ образомъ не должны стѣснять авторовъ ожидаемыхъ сообщеній.

3—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի ԿԱՅԻՆԻ ԿՏԱԿԸ

ՎԵՊԵՐ

ԶԱԽԵՐ-ՄԱԶՈՒԻ

Թարգմանեց

ՐԱՖՖԻ

ԳԻՆԵ Է 1 ԲՈՒՐԼ 20 ԿՈՊ.

Թիֆլիսում վաճառվում է

«Մշակի» խմբագրատանը—«Կենտրոնական
գրադաճառանոցում»—«Կովկասեան գրա-
վաճառանոցում»—Պ. Շահվերդեանի պավի-
լոնում:

Յտարաբարաբար կարող են գիտել
Թարգմանչին այս հասցեով:

Въ ТИФЛИСѢ. Редакція „МПАКЪ“.

РАФФИ.

14—30

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՒՆԴԱ-
ՆՈՑ որ հիմնված է կենդանիների հո-
վանաւորութեան ընկերութեանց գտնվում է
Սաղի վրա, Գլխաւի-Ղլիլի տանը: Հիւանդ-
ները ընդունվում են ամեն օր առաւօտան
10—12 ժամը:

Խորհուրդի և գեղատունի վճարը 20 կ.,
իսկ դեղերը այն գնով որով ձեռք է բե-
րում հիւանդանոցը: Աղքատները այդ բոլորը
ձրի են ստանում: Առողջ կենդանուն ըննե-
լու համար 1 րուբլ է վերցվում: Հիւանդ
անասուններին ընդունում են հետեւեալ ա-
նանաբոյժները: Շէյն-Ֆօդէլ երկուշաբ-
թի, Գիտովսկի երեքշաբթի, Ֆիլիմոնով
չորեքշաբթի, Բալտով հինգշաբթի,
Ալախտեան ուրբաթ, Մէշէրսկի շաբաթ
և Վալիլովսկի կիրակի: Վերջին անաս-
նաբոյժը ապրում է հիւանդանոցի մէջ:

ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒՆ- ԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻԱ, ՎՕՐՕՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԿԵՊ)
ՀԻՒՆԴԱՆԵՐԸ ԱՍՆԵ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՐՄ ԵՆ:
Ունի սենեակներ հիւանդների և ծնուն-
դկանների համար, օրական 2-ից մինչև 4
մանկի և ամառան 50-ից մինչև 100 մա-
նկի վարձով: Երթեկ հիւանդները վճա-
րում են խորհրդի համար 50 կ.: Հիւան-
դանոցի բոլոր բժիշկների համախորհրդի
(Կոնսիլիում) համար 3 մանկի, չբուժու-
ները անվճար:

Հիւանդները ամեն օր ընդունվում են.
Առաւօտան 9—12 ժամ, ՆԱՍԱՍԱՐ-
ԴԵԱՆ—վերաբուժական, վերական և ա-
մօի ցուրերի համար:

10—10½ ժ. ԲՈՒԿԿՈՎՍԿԻ—մանկական,
տեղբեր և կանանց ցուրերի:

10—11 ժ. (Կերակրի, չորեքշաբթի և
ուրբաթ) ՐԷՅՆ—աղքատներ:

11½—12½ ժ. (Երկուշաբթի), ԲԱՐԱ-
ՅԵԱՆ—տեղբեր և ջղային ցուրերի:

Երկուշաբթի 5½—6½ ժ.—ՆԱԻԱ-
ՍԱՐԴԵԱՆ—ամեն օր:

ԲԱՐԱՅԵԱՆ և ԲՈՒԿԿՈՎՍԿԻ—չորեքշաբ-
թի և շաբաթ:

Համախորհուրդ (հիւանդանոցի բո-
լոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—
6½—7½ ժամը երեկոյան:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱՍԱՍԱՐ-
ԴԵԱՆ (բնակվում է նոյն հիւանդանոցում):



Գտնվում է ԹԻՖԼԻՍԻՄ հետեւեալ մագաղիններում: Գ. Մ. Կոպաձէի,
Ս. Անիկի, Ա. Պ. Ախուրի, Վ. Ֆ. Սիմոնի, Ե. Ա. Եղիազարովի, Գ. Ա. Բախաղ-
չեկի, Ս. Ա. Ծովինովի, Յ. Ա. Բաբանովի, Յ. Ի. Գուրգենովի, Ի. Ա. Եւանդու-
լովի և ուրիշ շատերի մագաղիններում, նոյնպէս և ԿՈՎԿԱՍԵԱՆ երկրի
միւս բոլոր քաղաքներում:

1—20 (15—30)

КАВКАЗСКИЙ АДРЕСЪ КАЛЕНДАРЬ

Съ картою Кавказа продается во всѣхъ книжныхъ магазинахъ Тифли
са по 1 р. 50 к. За пересылку во всѣ города имперіи по 25 коп.

5—5